

Մ Ա Մ ՈՒ Լ Ի Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻ ԱՍՈՒԼԻՍԸ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ՍՐԱՀՈՒՄ
27. դեկտեմբեր. 2011**

Կոտայքի մարզն ունի 67 համայնք, այդ թվում՝ 7 քաղաքային: Մարզի փաստացի տարածքը կազմում 2076 քառ. կմ:

Կոտայքի մարզի բնակչության թիվը 2011թ. կազմել է 283.2 հազար մարդ, որը կազմում է հանրապետության ողջ բնակչության 8.6%-ը, որից 159.0 հազ. քաղաքաբնակներ են (56.1%), 124.2 հազարը՝ գյուղաբնակներ (43.9%): Նախորդ տարվա համեմատ մարզի բնակչության թիվը աճել է 1400-ով:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2011 թվականին կազմակերպվել և անցկացվել են համայնքի ղեկավարի ընտրություններ՝ Չարենցավան, Քաղսի, Աղավնաձոր, Բջնի, Գետարգել, Ողջաբերդ, Ֆանտան, Զառ, Մրգաշեն համայնքներում:

Հողի և գույքի վարձակալական վճարների և տեղական տուրքերի գանձման ուղղությամբ առաջադրանքը կատարվել է համապատասխանաբար 103.0 և 104.0 տոկոսներով:

Մարզի 67 համայնքներից գազաֆիկացված է 62-ը՝ նախորդ տարվա 61-ի փոխարեն (գազիֆիկացվել է Զովաշեն համայնքը) բաժանորդների քանակը՝ 59315 նախորդ տարվա համեմատ ավելացել է 1245-ով:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերով մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերում հաստատվել է համայնքային ծառայության 607 պաշտոն, որոնցից հաշվետու ժամանակաշրջանում զբաղեցված են 574-ը, թափուր են 33 հաստիքներ, որից 4-ը աշխատակազմերի քարտուղարների՝ Ողջաբերդ, Ֆանտան, Գետարգել և Քարաշամբ համայնքներում:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզպետարանի գործունեության հրապարակայնության ապահովման նպատակով 2011 թվականին ընթացքում պատրաստվել են շուրջ 125 տեղեկատվական թողարկումներ:

Տարվա ընթացքում Կոտայքի մարզպետարանում հիմնադրվել է նոր Տեղեկատվական կենտրոն և մամուլի սրահ:

2011 թվականին գործարկվել է Կոտայքի մարզպետարանի՝ www.kotayk.gov.am նոր պաշտոնական կայքը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մարզում գործում են մարզպետարանի ենթակայության 93 կրթական հաստատություններ, որոնցից 59-ը՝ միջնակարգ հանրակրթական, 31-ը՝ հիմնական, 1-ը՝ հատուկ (օժանդակ), 2-ը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական ուսումնարաններ), ինչպես նաև 11 ավագ դպրոցներ, տարբեր ենթակայության 2 կրթահամալիր, 1 մասնավոր դպրոց:

Մարզի հանրակրթական դպրոցներում այս ուսումնական տարում կոմպլեկտավորվել է 1674 դասարան՝ 34688 աշակերտներով: Այս ուսումնական տարում առաջին դասարան է ընդունվել 3360 աշակերտ:

Դպրոցներում ուսումնանյութատեխնիկական բազան հարստացնելու նպատակով «Փյունիկ» հասարակական կազմակերպության կողմից 2011 թվականի ընթացքում մարզի 19 դպրոցներին հատկացվել են «Քիմիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն» առարկաների լաբորատոր սարքավորումներ:

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ

Մարզում գործում են 25 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, 6 թանգարաններ, 2 թատրոններ, 3 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ, 72 գրադարաններ, 62 մշակույթի տներ և ակումբներ, 1 պատկերասրահ, 2 երաժշտական և 1 գեղարվեստի ստուդիաներ, 15 մանկապատանեկան մարզադպրոցներ:

Տարվա ընթացքում կազմակերպվել և իրականացվել են ՀՀ տոներին և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ, բազմաթիվ փառատոններ, մրցույթներ, մարզական խաղեր և այլ ստուգատեսներ: Մարզում հավուր պատշաճի նշվել են ՀՀ անկախության 20-րդ տարեդարձը, Տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 15-ամյակը: Կազմակերպվել են ազգային տոների և ծեսերի պահպանմանը, ժամանակակից արվեստի զարգացմանը նվիրված միջոցառումներ:

Տարվա ընթացքում կազմակերպվել և անցկացվել են բազմաթիվ մարզական միջոցառումներ:

Մարզի մարզադպրոցների սաները բարձր նվաճումների են հասել Աշխարհի, Եվրոպայի, Հանրապետության առաջնություններում և միջազգային մրցաշարերում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՈՒԹՅՈՒՆ

	2011թ.	2010թ.	դինամիկան
• Նպաստառու ընտանիքներ -	6911	8151	- 1240
• Կենսաթոշակառուներ -	40585	40143	442
• Գործազուրկներ -	6149	7328	- 1179
• Փախստականներ -	11800	11800	

1999-2011թթ. բնակարանային ապահովման նպատակով աջակցություն են ստացել մարզի զոհված և հաշմանդամ դարձած 196 անապահով զինծառայողների ընտանիքներ:

2011թ. դեկտեմբերի 26-ի դրությամբ մարզում հաշվառված են բնակարանի կարիք ունեցող 73 և բնակարանի բարելավման կարիք ունեցող 201 զոհված ու վիրավոր ազատամարտիկների ընտանիքներ/ընդհանուր 274/:

ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ տարում մարզի առողջապահական համակարգում գործել են 100% պետական բաժնեմասով 35 առողջապահական ընկերություններ:

Տարվա ընթացքում <<Անհետաձգելի հիվանդանոցային բուժօգնություն>> և <<Անհետաձգելի զինեկոլոգիական հիվանդությունների հիվանդանոցային բուժօգնություն>> ծրագրերում ներդրվել է բժշկական ծառայությունների փոխհատուցման համավճարային մեխանիզմների համակարգը:

Ներդրվել է նաև 0-7 տարեկան երեխաների պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բուժման փաստն ամրագրող <<Երեխայի առողջության պետական հավաստագրերի և անձնագրերի>> համակարգը (հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է 25834 երեխաների հավաստագիր և 2162 երեխայի առողջության անձնագիր):

ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2011թ-ի դեկտեմբեր 25-ի դրությամբ մարզում տարածքային հաշվառման մեջ են գտնվում 60 առանց ծնողական խնամքի մնացած /ԱԾԻՄ/ երեխաներ և 41 ԱԾԻՄ երեխաների թվին պատկանող անձ:

Այժմ վկայագրված են մարզի 310 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, նրանցից կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներից 81-ը վկայագրվել են 2011թ.-ի ընթացքում:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Մարզի հողային հաշվեկշռի համաձայն մարզում առկա են 160.1 հազար հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր, որոնք կազմում են հանրապետության նմանատիպ հողերի 7.9 տոկոսը, այդ թվում՝ վարելահողեր՝ 37.8 հազար հա, բազմամյա տնկարկներ՝ 2.4 հազար հա, խոտհարքներ՝ 10.8 հազար հա, արոտներ՝ 84.5 հազար հա: Նշված տարածքներից պետական և համայնքային սեփականություն են համարվում 8815 հա վարելահող, 2710 հա խոտհարք, 107.8 հա բազմամյա տնկարկ և 84.3 հազար հա արոտ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2011թ. բերքի տակ կատարվել է 13504 հա գյուղատնտեսական մշակաբույսերի ցանք, կամ օգտագործվել է վարելահողերի 35.6 տոկոսը, անցած տարվա 34.3 տոկոսի դիմաց: Նախորդ տարվա համեմատ հացահատիկի ցանքատարածությունները ավելացել են 466 հա-ով, տեխնիկական մշակաբույսերինը՝ 11 հա-ով:

Նախորդ տարվա համեմատ աշանագանի ցանքատարածությունները ավելացել են 1080 հա-ով: Կատարված աշանագանի ցանքատարածություններից շուրջ 720 հա-ի ցանքը կատարվել է կառավարության կողմից հատկացված 238 տոննա բարձր որակի առաջին վերարտադրության սերմացուով:

ԲՆԱՊԱՅՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանության ոլորտում իրականացված աշխատանքները ներառել են հիմնականում աղբահանության, ընդերքօգտագործման, ջրօգտագործման, անտառտնտեսավարման, շրջակա միջավայրին առնչվող առկա խնդիրների և թերությունների հայտնաբերմանն ու վերացմանը ուղղված միջոցառումների կատարմամբ, ապահովելով ՀՀ գործող օրենսդրության պահանջները:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ըստ նախնական վիճակագրական տվյալների 2011թ. մարզում (ընթացիկ գներով) թողարկվել է 92158.5 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք նախորդ տարվա 84986.5 մլն. դրամի փոխարեն կամ աճը կազմել է 7172.0 մլն. դրամ: 2010թ. համեմատ աճ է գրանցվել մշակող արդյունաբերության ոլորտում՝ շուրջ 6190.5 մլն. դրամ, էլեկտրականության արտադրության ոլորտում՝ շուրջ 1051.3 մլն. դրամ:

2011թ. մարզում արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալը կազմել է 91059.6 մլն. դրամ նախորդ տարվա 84473.3 մլն. դրամի փոխարեն կամ աճը կազմել է 7.8 %:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

2011 թվականին պետական բյուջեի միջոցներով Կոտայքի մարզպետարանին հատկացվել է 308,0 մլն. դրամ շարունակական համարվող 9 կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների համար:

Պահուստային ֆոնդից ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 3-ի թիվ 108-Ն որոշմամբ հատկացվեց 1 մլդ.318.0 մլն. դրամ մարզի համայնքներում խմելու և ոռոգման ջրագծերի կառուցման, գազաֆիկացման իրականացման, ճանապարհների ասֆալտապատման, բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների, մշակութային և կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների համար:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N 1436-Ն որոշման համաձայն Կոտայքի մարզպետարանին մարզի 38 համայնքներում առաջնահերթ լուծում պահանջվող հրատապ ծրագրերի իրականացման համար հատկացվել է ևս 1 մլդ. 318 մլն. դրամ, այդ թվում նախագծանախահաշվային աշխատանքների համար 46 մլն. 800 հազ. դրամ:

2011 թվականին բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և տարբեր հիմնադրամների կողմից տրամադրված 2,86 մլդ դրամ միջոցներով մարզի 22 համայնքներում կառուցվեցին 150 կմ խմելու ջրագծեր, 2 կմ կոյուղատար, 1,35 կմ գազատար, վերանորոգվեցին խմելու ջրի 2 պոմպակայաններ և 44 բազմաբնակարան շենքերի տանիքներ:

Կատարված ներդրումների շնորհիվ մարզում ջրամատակարարման միջին տևողությունը 6 ժամից հասավ 11 ժամի:

ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ԾԱՆԱԴԱՐՉԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Մարզում ընդհանուր օգտագործման պետական և համայնքային ենթակայության ավտոճանապահային ցանցի երկարությունը կազմում է 593.9 կմ, այդ թվում 48.9 կմ միջպետական, 417.2 կմ հանրապետական և 127.8 կմ տեղական նշանակության:

Ընդհանուր առմամբ մարզի ճանապարհային ցանցի նորոգման և պահպանության ուղղությամբ 2011 թ. կատարվել են 784,4 մլն. դրամի աշխատանքներ:

Մարզի տարածքում գործում են 42 ներմարզային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներ, որոնցում ընդգրկված են 134 տրանսպորտային միջոցներ:

*ՀՀ Կոտայքի մարզպետարանի
աշխատակազմի տեղեկատվության
և հասարակայնության հետ կապերի բաժին*

Հեռ. /0223/2-73-37 , kotayk.press@mta.gov.am